ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 1183 - Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՋԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԸ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1241-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 11-րդ, 14-րդ և 23-րդ կետերը, 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ կետը, 10-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը, 7-րդ մասի 1-ին կետը, 9-րդ մասը, 11-րդ մասի 1-ին, 2-րդ կետերը և 13-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին մասը, 14.2-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 14.4-րդ հոդվածի 1-ին մասը, 14.5-րդ հոդվածի 7-րդ մասը, 14.6-րդ հոդվածի 1-ին մասը, 14.7-րդ հոդվածի 5-րդ մասը, 14.8-րդ հոդվածի 1-ին, 6-րդ և 7-րդ մասերը, 14.10-րդ հոդվածի 2-րդ մասը, 14.11-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, 14.12-րդ հոդվածի 2-րդ մասը, 15-րդ հոդվածի 5-րդ մասը, 22-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ հոդվածի 1-ին մասը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը, 26-րդ հոդվածի

3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը (ՊՄԳ ընթացակարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներն են՝

ա. առողջապահություն,

բ. կրթություն,

գ. էներգետիկա,

դ. ջրային տնտեսություն,

ե. տրանսպորտային ենթակառուցվածքներ և ծառայություններ,

զ. կոշտ թափոնների հավաքում, մշակում և հեռացում,

է. փոստային ենթակառուցվածքներ և ծառայություններ,

ը. կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրում և էլեկտրոնային նույնականացման համակարգ.

2) պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 1241-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

02.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ